



**Միացյալ Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիր (UNEP)**

**ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

**ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՎԱՎԵՐԱԳԻՐ**

Օզոնային շերտի պահպանության լիազոր ներկայացուցիչների Կոնֆերանսի եզրակարգի վավերագիրը

1. Օզոնային շերտի պահպանության լիազոր ներկայացուցիչների Կոնֆերանսը գումարվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի (ՅՈՒՆԵՊ) գործադիր-տնօրենի կողմից՝ ի կատարումն ՅՈՒՆԵՊ-ի կառավարիչների խորհրդով 1984 թվականի մայիսի 28-ին ընդունված 12/14 որոշման 1 բաժնի 4-րդ կետի:

2. Կոնֆերանսը տեղի է ունեցել 1985 թվականի մարտի 18-ից 22-ը Վիեննայի միջազգային կենտրոնում, Վիեննա, Ավստրիայի Հանրապետության Կառավարության աջակցությամբ:

3. Կոնֆերանսին հրավիրված էին բոլոր պետությունները: Հրավերն ընդունեցին և Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին հետևյալ պետությունները՝

Ավստրալիա, Ավստրիա, Ալժիր, Արգենտինա, Բելոռուսական ԽՍՀ, Բելգիա, Բրազիլիա, Վենեսուելա, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, Հունաստան, Դանիա, Եգիպտոս, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Կանադա, Լյուքսեմբուրգ, Մարոկկո, Մեքսիկա, Նիգերիա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Պերու, Սենեգալ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ԽՍՀՄ, Ուկրաինական ԽՍՀ, Ֆիլիպիններ, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Չիլի, Շվեյցարիա, Շվեդիա, Ճապոնիա:

4. Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին դիտորդներ հետևյալ պետություններից՝

Բուլղարիա, Ինդոնեզիա, Չինաստան, Թունիս, Ուրուգվայ, Էկվադոր, Հարավսլավիա

5. Կոնֆերանսին ներկա էին նաև դիտորդներ Միացյալ Ազգերի Կազմակերպության, մասնագիտացած հիմնարկությունների, միջկառավարական և ոչկառավարական կազմակերպությունների հետևյալ մարմիններից՝

Արդյունաբերական զարգացման Միացյալ Ազգերի Կազմակերպություն, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն, Եվրոպական տնտեսական համագործակցություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Քիմիական արդյունաբերության ֆեդերացիաների եվրոպական խորհուրդ, Միջազգային առևտրի պալատ, Աերոզոլների եվրոպական ասոցիացիաների ֆեդերացիա:

6. Բացման արարողության ընթացքում Կոնֆերանսի մասնակիցներին Ավստրիայի Հանրապետության կառավարության անունից ողջունեց առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության նախարար դ-ր Կուրտ Շտեյրերը: Կոնֆերանսը պաշտոնապես բացեց, ՅՈՒՆԵՊ-ի գործադիր- տնօրեն, Կոնֆերանսի գլխավոր քարտուղարի ֆունկցիաների կատարող, դ-ր Մուստաֆա Կ.Տուբան, իսկ գործադիր քարտուղար էր նշանակված պարոն Ջերրի Օ'Դելլը:

7. Կոնֆերանսը միաձայն Նախագահ ընտրեց պ-ն Վինֆրիդ Լանգեին (Ավստրիա)

8. Կոնֆերանսն ընտրեց նաև հետևյալ պաշտոնատար անձանց՝

- Նախագահի տեղակալներ՝
- պ-ն Ջերալդո Էուլալիո դո Նասչիմենտո է Սիլվա (Բրազիլիա)
- պ-ն Մոհամեդ Էլ -Տահեր Շաշ (Եգիպտոս)
- պ-ն Ռունե Լյոննգրեն (Շվեդիա)
- պ-ն Յուրի Սեդուևով (խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն)
- Ձեկուցող՝
- պ-ն Վիլլեն Կակեբեկե (Նիդերլանդներ)



տ-ն Սաթու Նուրմի (Ֆինլանդիա)  
պ-ն Ֆիլիպպ Սերյոբեն (Ֆրանսիա)  
պ-ն Վադիմ Բակունով (ԽՍՀՄ)  
պ-ն Պատրիկ Ջելլ (Միացյալ Թագավորություն)  
պ-ն Սկոտտ Չեջսոտ (ԱՄՆ)

12. Կոնֆերանսի աշխատանքի համար հիմք ծառայեցին հետևյալ գլխավոր փաստաթղթերը՝

-Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիայի հիմնգրող վերանայված նախագիծը (UNEP/IG. 53/3)

- Իրավական և տեխնիկական հարցերով փորձագետների հատուկ աշխատանքային խմբի վերջնական զեկուցումը Օզոնային շերտի պահպանության մասին գլոբալ բազային կոնվենցիայի մշակման համար (UNEP/IG. 53/4):

13. Ի լրացումն դրան ՅՈՒՆԵՊ-ի քարտուղարությունը կոնֆերանսին ներկայացրեց մի շարք այլ փաստաթղթեր

14. Կոնֆերանսը հաստատեց Լիազորությունները ստուգող իր կոմիտեի հանձնարարականները՝ 3-րդ կետում թվարկված մասնակից-պետությունների ներկայացուցիչների լիազորությունները բավարար ճանաչելու մասին:

15. Լրիվ կազմի կոմիտեի աշխատանքների հիման վրա կոնֆերանսը 1985 թվականի մարտի 22-ին ընդունեց Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիան: Սույն ամփոփիչ վավերագրին կցված կոնվենցիան բաց կլիմի ստորագրման համար Ավստրիայի Հանրապետության արտաքին գործերի ֆեդերալ նախարարությունում, Վիենայում 1985 թվականի մարտի 22-ից մինչև 1985 թվականի սեպտեմբերի 21-ը ներառյալ և Միացյալ Ազգերի Կազմակերպության կենտրոնական հիմնարկություններում, Նյու-Յորքում 1985 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 1986 թվականի մարտի 21-ը ներառյալ:

16. Կոնֆերանսը ընդունեց նաև հետևյալ բանաձևերը, որոնք կցվում են սույն եզրափակիչ վավերագրին՝

1. Կազմակերպչական և ֆինանսական միջոցառումների մասին բանաձևը:

2. Քլորֆտոր ածխաջրածինների արձանագրության մասին բանաձևը:

3. Երախտագիտության խոսք ուղղված Ավստրիայի Հանրապետության կառավարությանը:

17. Եզրափակիչ վավերագրի ընդունման պահին որոշ պետություններ կատարեցին հայտարարություններ, որոնք բերվում են սույն ամփոփիչ վավերագրին կցված UNEP/IG, 53/5 փաստաթղթում:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ ներկայացուցիչները ստորագրեցին սույն ամփոփիչ վավերագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Վիեննայում հազար ինը հարյուր ութսունհինգ թվի մարտի քսան երկուսին անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով եզակի օրինակով, ընդ որում բոլոր լեզուներով տեքստերը համարվում են հավասար աուտենտիկ: Տեքստի բնագիրը կհանձնվի Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ:

## 1. Կազմակերպչական և ֆինանսական միջոցառումների մասին բանաձևը

Կոնֆերանսը,

ընդունելով օզոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիան,

հիշեցնելով, որ կոնվենցիայի համաձայն Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրին (ՅՈՒՆԵՊ) հանձնարարված է կատարել քարտուղարության գործառույթները մինչև Կողմերի

Կոնֆերանսի հերթական առաջին խորհրդակցության ավարտը, որը գումարված էր ի կատարումն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի,

գիտակցելով, որ Կոնվենցիայի քարտուղարության ծախսերի ֆինանսավորումը և վարչական այլ ծախսերը դրված են Կոնվենցիայի կողմերի վրա,

1. ընդունում է ի գիտություն Կոնվենցիայի քարտուղարության առաջին երկու տարվա աշխատանքի ծախսերի նախահաշիվը, որը ներկայացված է ՅՈՒՆԵՊ-ի և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) քարտուղարությունների կողմից,

2. ընդունում է ի գիտություն նաև -ՅՈՒՆԵՊ-ի Գործադիր-տնօրենի կողմից շրջակա միջավայրի պաշտպանության ֆոնդում միջոցների առկայության դեպքում ժամանակավոր քարտուղարության գործունեության առաջին երկու-երեք տարվա ընթացքում ծախսերի ֆինանսավորման մեջ ներդրում կատարելու պատրաստակամությունը,

3. խնդրում է ՅՈՒՆԵՊ-ի գործադիր տնօրենին Կոնվենցիան ստորագրած պետությունների հետ խորհրդակցելով և սերտ համագործակցելով ՀՕԿ-ի և Միացյալ Ազգերի Կազմակերպության այլ համապատասխան մարմինների հետ ժամանակավոր քարտուղարության համար ապահովել անհրաժեշտ միջոցներ Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար ,

4. Այնուհետև գոհունակությամբ ի գիտություն է ընդունում ՅՈՒՆԵՊ-ի Գործադիր-տնօրենի և ՀՕԿ-ի գործադիր խորհրդի հայտարարությունները, որոնց մեջ արտահայտված էր Կոնվենցիայի մշտական քարտուղարության ֆունկցիաները կատարելու նրանց պատրաստակամությունը:

## 2. Քլորֆտորածխածինների մասին արձանագրության բանաձևը

Կոնֆերանսը,

գոհունակությամբ նշելով, որ Օզոնային շերտի պահպանության մասին Կոնվենցիան բաց էր ստորագրման համար վիեննայում 1985 թվականի մարտի 22-ից,

հաշվի առնելով Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի կառավարիչների խորհրդի կողմից 1980թ. ապրիլի 29-ին ընդունված 8/7B որոշումը

համարելով, որ Կոնվենցիան կարևոր քայլ է օզոնային շերտը մարդու գործունեության հետևանքով առաջացած փոփոխություններից պահպանելու համար,

նշելով, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պարտադրում է ընդունել համապատասխան միջոցներ մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը ոչ բարենպաստ ազդեցությունից պահպանելու համար, որը հանդիսանում է, կամ կարող է լինել մարդու գործունեության արդյունք և որը բերում է կամ ունակ է բերելու օզոնային շերտի վիճակի փոփոխմանը,

ճանաչելով այն հնարավորությունը, որ ամբողջ երկրագնդով կատարված արտանետումը և լրիվ հալոիդացված քլորֆտորածխածինների (ՔՖԱ) և քլոր պարունակող այլ նյութերի կիրառումը, կարող է զգալի չափով քայքայել օզոնային շերտը կամ այլ ձևով փոխել նրա վիճակը, որը կարող է հանգեցնել մարդկանց առողջության, ցանքերի, ծովային ֆաունայի, նյութերի և կլիմայի պոտենցիալ վնասակար հետևանքների, և մինչև ժամանակ ճանաչելով հնարավոր փոփոխությունների և նրանց պոտենցիալ վնասակար հետևանքների հետագա գնահատման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով արտանետումների և ՔՖԱ-ի կիրառման հսկողության պրոֆիլակտիկ միջոցառումները, որոնք արդեն ընդունված են ազգային և ռեգիոնալ մակարդակներով, որ այդպիսի միջոցները կարող են լինել ոչ բավարար օզոնային շերտի պահպանության համար,

լինելով լի վճռականությամբ դրա հետ կապված, ճշմարիտ հիմքերի վրա շարունակել բանակցությունները ՔՖԱ-ի գլոբալ արտադրության, արտանետման և կիրառման հսկողության արձանագրության մշակման վերաբերյալ,

հաշվի առնելով, որ հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել զարգացող երկրների յուրահատուկ դիրքին,

հաշվի առնելով նաև պետության արդյունաբերական զարգացման մակարդակի և օգոնային շերտի պահպանության համար նրա պատասխանատվության աստիճանի միջև եղած փոխկապվածությունը,

նշելով, Իրավական և տեխնիկական հարցերով զբաղվող փորձագետների մասնագիտացած աշխատանքային խմբի կողմից ՔՖԱ-ին վերաբերող արձանագրության մշակման նպատակով օգոնային շերտի պահպանության մասին գլոբալ բազային կոնվենցիայի նախապատրաստման բնագավառում ձեռք բերած նշանակալի առաջընթացը և միաժամանակ նշելով, որ հիշատակված աշխատանքային խումբը ի վիճակի չէրավ ավարտել իր աշխատանքը արձանագրության վրա,

1. մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը խնդրում է ՅՈՒՆԵՊ-ի Գործադիր-տնօրենին Հատուկ աշխատանքային խմբի գործունեության արդյունքների հիման վրա հրավիրել աշխատանքային խումբ արձանագրության վրա աշխատանքը շարունակելու համար, որը վերաբերում է ՔՖԱ-ի և այլ նյութերի գլոբալ արտադրության, արտանետման և արդար հիմքերով նրանց կիրառման նկատմամբ հսկողության ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարություններին, ընդ որում ի նկատի ունենալով զարգացող երկրների հատուկ դիրքը, ինչպես նաև գիտական և տնտեսական վերջին հետազոտությունների արդյունքները,

2. համառորեն կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին արձանագրության վրա աշխատանքին աջակցելու նպատակով իրականացնել համագործակցություն հետազոտությունների բնագավառում, որոնք կապահովեն օգոնային շերտի վիճակի վրա բացասական ազդեցություն գործող ՔՖԱ-ի և այլ նյութերի գլոբալ արտադրության, արտանետման և կիրառման հնարավոր սցենարների, ինչպես նաև ծախսերի և հետևանքների ավելի լայն ըմբռնում և որոնք կապված են հսկողության տարբեր միջոցառումների հետ և այդ նպատակով խնդրում է հիշատակված կողմերին հանդես գալ որպես նախաձեռնող ՅՈՒՆԵՊ-ի հովանու տակ տվյալ հարցով սեմինարի անցկացման համար,

3. խնդրում է աշխատանքային խմբին արձանագրության վրա հետագա աշխատանքի ընթացքում ի նկատի ունենալ, inter alia, Օգոնային շերտի պահպանության կորրոկցիոն կոմիտեի գեկուցումը նրա ութերորդ սեսիայի աշխատանքի մասին, ինչպես նաև Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից 1985 թվականին անցկացված մթնոլորտային օգոնը կարգավորող ֆիզիկական և քիմիական պրոցեսների ժամանակակից ըմբռնման գնահատականը,

4. լիազորում է Գործադիր-տնօրենին խորհրդակցել Կոնվենցիան ստորագրած պետությունների հետ և մինչ նրա ուժի մեջ մտնելը գումարել դիվանագիտական կոնֆերանս, հնարավորին չափով 1987 թվականին, այդպիսի արձանագրության ընդունման համար;

5. կոչ է անում պետություններին, որոնք ստորագրել են Կոնվենցիան և արձանագրության մշակմանը մասնակցած շահագրգիռ այլ կողմերին տրամադրել ֆինանսական միջոցներ վերը շարադրված կետերում նախատեսված գործունեությանը աջակցություն ցույց տալու համար;

6. համառորեն կոչ է անում բոլոր պետություններին և տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպություններին մինչև արձանագրության ուժի մեջ մտնելը հսկել ՔՖԱ-ի արտանետումը, inter alia, աերոզոլների ձևով, իրենց տրամադրության տակ գտնվող ցանկացած միջոցներով, ներառյալ մաքսիմալ հնարավոր չափով նրանց արտադրության կամ օգտագործման հսկողությունը:

3. Երախտագիտության արտահայտումը Ավստրիայի Հանրապետությանը

-  
Կոնֆերանսը,

անցկացնելով իր խորհրդակցությունը Վիեննա այում 1985 թվականի մարտի 18-ից մինչև 22-ը Ավստրիայի Հանրապետության կառավարության սիրալիի հրավերով,

համոզված լինել նրանում, որ Ավստրիայի Հանրապետության կառավարության և Վիեննա քաղաքի քաղաքացիական իշխանությունների ջանքերը, որոնք ուղղված էին տեխնիկական միջոցների, տարածությունների և այլ ծառայությունների ապահովմանը, զգալի չափով նպաստել են Կոնֆերանսի անխոչընդոտ աշխատանքին,

քարծր գնահատելով, որը Ավստրիայի Հանրապետության կառավարության և Վիեննա քաղաքի կողմից Կոնֆերանսին մասնակցող պատվիրակությունների անդամների, դիտորդների և քարտուղարության աշխատակիցների նկատմամբ ցուցաբերված սիրալիությունը և հյուրընկալությունը

-  
արտահայտում է իր անկեղծ երախտագիտությունը Ավստրիայի Հանրապետության կառավարությանը, Վիեննա քաղաքի իշխանություններին և նրանց միջոցով Ավստրիական ժողովրդին, մասնավորապես Վիեննայի բնակիչներին, այն ջերմ ընդունելության համար, որը նրանք ցուցաբերեցին Կոնֆերանսի մասնակիցներին և բոլոր նրանց, ովքեր կապված են եղել նրա աշխատանքի հետ, և նաև Կոնֆերանսի հաջող անցկացման գործում նրանց ներդրման համար:

## **ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՂՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ**

### **ՆԵՐՎՃԱԿԱՆ**

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

գիտակցելով օգոնային շերտի վիճակի փոփոխությունների պոտենցիալ կործանարար ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,

վկայակոչելով Միացյալ Ազգերի Կազմակերպության մարդու շրջակա միջավայրի Կոնֆերանսի Դեկլարացիայի համապատասխան դրույթները, և մասնավորապես 21-րդ սկզբունքը, որը նախատեսում է, որ “Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն պետություններն ունեն իրենց սեփական ռեսուրսները մշակելու ինքնավար իրավունք ըստ շրջակա միջավայրի բնագավառում իրենց վարած քաղաքականության և պատասխանատվություն են կրում այն բանի ապահովման համար, որպեսզի իրենց իրավասության կամ վերահսկողության շրջանակներում տարվող գործունեությունը վնաս չհասցնի այլ պետությունների կամ շրջանների շրջակա միջավայրին ազգային իրավասության սահմաններից դուրս”,

նկատի ունենալով զարգացող երկրների հանգամանքները և հատուկ պահանջները ,

հաշվի առնելով ինչպես միջազգային, այնպես էլ ազգային կազմակերպություններում տարվող աշխատանքը և հետազոտությունները, և, մասնավորապես, Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի օգոնային շերտի վերաբերյալ գործողությունների համաշխարհային պլանը,

հաշվի առնելով նաև օգոնային շերտի պահպանության ազգային և միջազգային մակարդակների վրա արդեն ընդունված նախազուշական միջոցառումները ,

գիտակցելով, որ մարդու գործունեության արդյունքում առաջացած փոփոխություններից օգոնային շերտի պահպանության միջոցառումները պահանջում են միջազգային համագործակցություն և գործողություններ միջազգային մակարդակով և պետք է հիմնվեն համապատասխան գիտատեխնիկական դատողությունների վրա,

գիտակցելով նաև օգոնային շերտի և նրա վիճակի փոփոխության հնարավոր բացասական հետևանքների մասին լրացուցիչ գիտական տեղեկություններ ստանալու համար հետագա հետազոտությունների և սխտեմատիկ դիտումների անցկացման անհրաժեշտությունը, լինելով վճռականությամբ լի պաշտպանելու մարդու առողջությունը և շրջակա միջավայրը օգոնային շերտի վիճակի փոփոխության անբարենպաստ ազդեցությունից,

## **ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ`**

### **Հոդված 1**

#### **ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

Սույն Կոնվենցիայում`

1. “Օգոնային շերտ” նշանակում է մոլորակի սահմանամերձ շերտից վերև գտնվող մթնոլորտային օզոնի շերտը.
2. “Ոչ բարենպաստ ազդեցություն” նշանակում է փոփոխություններ ֆիզիկական միջավայրում, կամ բիոտայում ներառյալ կլիմայի փոփոխությունները, որոնք ունեն զգալի վնասակար հետևանքներ մարդու առողջության համար, կամ բնական և կանոնավորվող էկոհամակարգերի կամ մարդու կողմից օգտագործվող նյութերի բաղադրության, վերականգնողական հատկությունների կամ արդյունավետության համար:
3. “Այլընտրանի տեխնոլոգիաներ կամ սարքավորումներ” կոչվում են, այն տեխնոլոգիաներ կամ սարքավորումներ, որոնց կիրառումը թույլ է տալիս քչացնել կամ լրիվ վերացնել նյութերի արտանետումները, որոնք ցուցաբերում են կամ ունակ են ցուցաբերելու ոչ բարենպաստ ազդեցություն օգոնային շերտի վրա:
4. “Ալտերնատիվ նյութեր” նշանակում են նյութեր, որոնք նվազեցնում են կամ կանխարգելում են ոչ բարենպաստ ազդեցությունը օգոնային շերտի վրա:
5. “Կողմերը” մեծատառով գրված, եթե տեքստում չի նշված մեկ այլ բան, նշանակում են սույն Կոնվենցիայի Կողմեր
6. “Տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպություն” նշանակում է կազմակերպություն կազմված տվյալ ռեգիոնի ինքնավար պետությունների կողմից, որը իրավասու է սույն Կոնվենցիայի և նրա արձանագրություններով կարգավորվող հարցերում և պատշաճ ձևով լիազորված է, իր ներքին գործընթացին համապատասխան ստորագրել, վավերացնել, ընդունել, հավանություն տալ համապատասխան փաստաթղթերին կամ միանալ նրանց:
7. “Արձանագրությունները” նշանակում են սույն Կոնվենցիայի արձանագրությունները:

### **Հոդված 2**

#### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Կողմերն ընդունում են պատշաճ միջոցներ սույն Կոնվենցիային և այն գործող արձանագրությունների դրույթներին համապատասխան, որոնց մասնակից են հանդիսանում նրանք, որպեսզի պաշտպանեն մարդու առողջությունը և շրջակա միջավայրը ոչ բարենպաստ հետևանքներից, որոնք օգոնային շերտի վիճակը փոփոխող կամ փոփոխելու ունակ մարդկային գործունեության արդյունք են,
2. Այդ նպատակով Կողմերը, իրենց տրամադրության տակ ունեցած միջոցներին և իրենց հնարավորություններին համապատասխան

a) համագործակցում են սիստեմատիկ դիտումների, հետազոտությունների և տեղեկատվության փոխանակման միջոցով, որպեսզի ավելի խորը ճանաչեն և գնահատեն մարդու գործունեության ազդեցությունը օգոնային շերտի վրա և օգոնային շերտի վիճակի փոփոխությունների հետևանքները մարդու առողջության և շրջակա միջավայրի համար,

b) ընդունում են պատշաճ օրենսդրական և վարչական միջոցառումներ և համագործակցում են համապատասխան ծրագրային միջոցառումների համաձայնեցման բնագավառում, որպեսզի վերահսկեն, սահմանափակեն, կրճատեն և կանխեն իրենց վերահսկման կամ իրավասության ենթակա մարդու գործունեությունը, եթե հայտվաբերվի, որ այդ գործունեությունը թողնում է կամ կարող է թողնել անբարենպաստ ազդեցություն, փոխելով օգոնային շերտի վիճակը կամ ստեղծելով նրա փոփոխման հնարավորություն,

c) համագործակցում են սույն Կոնվենցիայի կատարման համար համաձայնեցված միջոցառումներ, գործընթացներ և ստանդարտներ մշակելիս արձանագրությունների և հավելվածների ընդունման նպատակով:

d) համագործակցում են իրազեկ միջազգային մարմինների հետ, որպեսզի արդյունավետ իրականացնեն սույն Կոնվենցիան և այն արձանագրությունները ,որոնց մասնակիցն են նրանք,

3. Սույն Կոնվենցիայի դրույթները միջազգային իրավունքին համապատասխան ոչ մի ձևով չեն շոշափում Կողմերի ներպետական միջոցառումներ ընդունելու իրավունքները , ի լրացում վերը՝ 1 և 2-րդ կետերում նախատեսված միջոցառումներին. նրանք չեն շոշափում նաև Կողմերի կողմից արդեն ընդունված լրացուցիչ ներպետական միջոցառումները, , այն պայմանով, որ այդպիսի միջոցառումները համատեղելի են սույն Կոնվենցիայի շրջանակներում նրանց պարտականությունների հետ:

4. Սույն հոդվածի օգտագործումը հիմնվում է համապատասխան գիտատեխնիկական դատողությունների վրա:

### **Յոդված 3**

#### **ՉԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԴԻՏՈՒՄՆԵՐ**

1. Կողմերը պարտավորվում են համապատասխան կարգով կազմակերպել հետազոտություններ և գիտական գնահատումներ և համագործակցել նրանց անցկացման համար անմիջականորեն կամ իրազեկ միջազգային մարմինների միջոցով հետևյալ հարցերով՝

a) ֆիզիկական և քիմիական պրոցեսները, որոնք կարող են ազդել օգոնային շերտի վրա;

b) մարդու առողջության վրա ազդեցությունը և այլ կենսաբանական հետևանքները, որոնք առաջացել են օգոնային շերտի վիճակի փոփոխությունից, հատկապես կենդանի օրգանիզմների վրա ազդող ուլտրամանուշակագույն արեգակնային ճառագայթման փոփոխություններից (ՈւՄ - Կ),

c) ազդեցությունը կլիմայի վրա

d) օգոնային շերտի վիճակի ցանկացած փոփոխությունների և ՈւՄ-Կ ճառագայթման ինտենսիվության ցանկացած հերթական փոփոխությունների ազդեցությունը մարդու կողմից օգտագործվող բնական և արհեստական նյութերի վրա,

e) նյութերը, աշխատանքի պրակտիկան, պրոցեսները և գործունեության տեսակները, որոնք կարող են ազդել օգոնային շերտի և նրա կոմուլյատիվ ազդեցության վրա,

f) այլընտրանքային նյութերը և տեխնոլոգիաները,

g) համապատասխան սոցիալ-տնտեսական հարցերը, ինչպես նաև այլ հարցերով, որոնք մանրամասն քննարկվում են I և II հավելվածներում:



2. Կողմերը պարտավորվում են աջակցել կամ վարել օգոնային շերտի վիճակը և այլ համապատասխան պարամետրերը հսկող սիստեմատիկ դիտարկումների համատեղ կամ միմյանց լրացնող ծրագրեր, համագործակցելով անմիջականորեն կամ իրազեկ միջազգային մարմինների միջոցով, լրիվ հաշվի առնելով ազգային օրենսդրությունը և այնպիսի գործունեություններ, որոնք տարվում են ինչպես ազգային, նույնպես և միջազգային մակարդակներով, ինչպես դա նախատեսվում է հավելված 1-ում:

3. Կողմերը պարտավորվում են անմիջականորեն իրենք կամ իրազեկ միջազգային մարմինների միջոցով համագործակցել հետազոտական տվյալների հավաքման, ստուգման, միջազգային համապատասխան կենտրոնների միջոցով տվյալների կանոնավոր և ժամանակին փոխանցումը ապահովելու գործում:

#### **Յոթված 4**

#### **ՉԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

1. Կողմերը աջակցում են սույն Կոնվենցիային վերաբերող գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, առևտրական և իրավական տեղեկատվության բարենպաստ փոխանակմանը հավելված II-ում բերվող ավելի մանրամասն դրույթներին համապատասխան: Այդպիսի տեղեկատվությունը տրամադրվում է այն մարմիններին, որոնց մասին կայանաավորվեն Կողմերը: Տեղեկատվություն ստացող ցանկացած այդպիսի մարմին, որին մատակարարող կողմը համարում է խորհրդապահական, երաշխավորում է չիրապարակել այդպիսի տեղեկատվությունը և ամփոփում է այն այնպիսի ձևով, որպեսզի պահպանվի նրա խորհրդապահական բնույթը մինչ այն ժամանակ, երբ նա կտրամադրվի բոլոր Կողմերի տնօրինմանը:

2. Կողմերը համագործակցում են իրենց ազգային օրենքներին, նորմաներին և պրակտիկային համապատասխան, հաշվի առնելով, մասնավորապես, որ զարգացող երկրները կարիք ունեն զարգացման և տեխնոլոգիաների ու գիտելիքների փոխանցման անմիջականորեն կամ իրազեկ միջազգային մարմինների միջոցով: Այդպիսի համագործակցությունը իրականացվում է, մասնավորապես, հետևյալ ուղիներով՝

- a) այլ Կողմերի կողմից թեթևացվում է այլընտրանքային տեխնոլոգիաների ձեռք բերումը,
- b) նրանց տրամադրվում է տեղեկատվություն այլընտրանքային տեխնոլոգիաների և սարքավորումների և համապատասխան հրահանգների կամ ձեռնարկների մասին,
- c) մատակարարվում են անհրաժեշտ սարքավորումներ և ապարատուրա հետազոտությունների և սիստեմատիկ դիտարկումների կատարման համար
- d) պատրաստվում են անհրաժեշտ գիտատեխնիկական կադրեր

#### **Յոթված 5**

#### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ**

Կողմերը քարտուղարության միջոցով, 6-րդ հոդվածի համաձայն հիմնված Կողմերի Կոնֆերանսին, փոխանցում են տեղեկատվություն սույն Կոնվենցիայի և այն արձանագրությունների իրականացման համար ձեռնարկված միջոցառումների մասին, որոնց մասնակիցն են նրանք հանդիսանում, այնպիսի ձևով և այնպիսի պարբերությամբ, որոնք կսահմանվեն համապատասխան պայմանագրային փաստաթղթերով կողմերի խորհրդակցություններում:

#### **Յոթված 6**

#### **ԿՈՂՄԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

1. Սույնով հիմնվում է Կողմերի Կոնֆերանսը: Կողմերի Կոնֆերանսի առաջին խորհրդակցությունը գումարվում է 7-րդ հոդվածի համաձայն ժամանակավոր հիմունքներով քարտուղարության կողմից նշանակված ժամկետում ոչ ուշ քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց: Հետագայում Կողմերի Կոնֆերանսի հերթական խորհրդակցությունները գումարվում են այն պարբերականությամբ, որը կսահմանի Կոնֆերանսը առաջին խորհրդակցությունում:
2. Կողմերի Կոնֆերանսի արտահերթ խորհրդակցությունները գումարվում են այն ժամանակ, եթե Կոնֆերանսը գտնի այն անհրաժեշտ, կամ Կողմերից մեկի գրավոր պահանջով, այն պայմանով, որ քարտուղարության կողմից Կողմերին ուղարկվելուց հետո վեց ամսվա ընթացքում այդ խնդրանքը արժանանա Կողմերի ոչ պակաս քան մեկ երրորդի օժանդակությամբ:
3. Կողմերի Կոնֆերանսը կոնսենսուսով համաձայնեցնում և ընդունում է ինչպես սեփական, այնպես էլ ցանկացած օժանդակ մարմինների, որոնք նա կարող է սահմանել, գործընթացը և ֆինանսական կանոնները, , ինչպես նաև քարտուղարության գործունեությունը կարգավորող ֆինանսական դրույթները:
4. Կողմերի Կոնֆերանսը անընդհատ հետևում է սույն Կոնվենցիայի կատարման ընթացքին և, բացի դրանից`
  - a) սահմանում է տեղեկատվության փոխանցման պարբերականությունը և ձևը, որը պետք է ներկայացվի 5-րդ հոդվածին համապատասխան, և քննարկում է ցանկացած օժանդակ մարմնի կողմից ներկայացված նույնպիսի տեղեկատվությունը, ինչպես նաև զեկուցումները,
  - b) ամփոփում է օգոնային շերտի վիճակի մասին, նրա հնարավոր փոփոխությունների և ցանկացած այդպիսի փոփոխությունների և հնարավոր հետևանքների մասին գիտական տեղեկատվությունը,
  - c) 2-րդ հոդվածին համապատասխան աջակցում է օգոնային շերտի վիճակի փոփոխության պատճառ հանդիսացող և կամ փոփոխություն առաջացնող նյութերի արտանետումները միմիումին հասցնելու նպատակով համապատասխան քաղաքականության, ռազմավարության և միջոցների համաձայնեցմանը, և պատրաստում է հանձնարարականներ սույն Կոնվենցիային վերաբերվող ցանկացած այլ միջոցառումների վերաբերյալ,
  - d) 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն ընդունում է հետազոտությունների, սիտեմատիկ դիտումների, գիտատեխնիկական համագործակցության , տեղեկատվության փոխանակման և տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցման ծրագրեր,
  - e) անհրաժեշտության դեպքում քննարկում և ընդունում է ուղղումներ սույն Կոնվենցիային կամ նրա հավելվածներին 9-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան,
  - f) քննարկում է ցանկացած արձանագրության, ինչպես նաև նրա ցանկացած հավելվածների ուղղումները և, համապատասխան որոշման առկայության դեպքում, հանձնարարում է այդպիսի արձանագրության կողմերին ընդունել դրանք,
  - g) անհրաժեշտության դեպքում քննարկում է և ընդունում լրացուցիչ հավելվածներ սույն Կոնվենցիային, 10-րդ հոդվածին համապատասխան;
  - h) անհրաժեշտության դեպքում քննարկում է և ընդունում արձանագրություններ 8-րդ հոդվածին համապատասխան
  - i) սահմանում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք համարվում են անհրաժեշտ սույն Կոնվենցիայի իրականացման համար;
  - j) ըստ անհրաժեշտության օգտվում է իրազեկ միջազգային մարմինների և գիտական կոմիտեների ծառայություններից, մասնավորապես, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության և Համաշխարհային առողջապահության կազմակերպության, ինչպես նաև գիտական հետազոտությունների, սիտեմատիկ դիտարկումների, սույն Կոնվենցիայի նպատակների հետ կապված գործունեության այլ տեսակների ոլորտում օգոնային շերտի Կոորդինացնող կոմիտեի հետ, և պատշաճ կերպով օգտագործում է այդպիսի մարմիններից և կոմիտեներից ստացած տեղեկատվությունը,
  - k) քննարկում և ընդունում է ցանկացած լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են պահանջվել սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար:

5. Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, նրա մասնագիտացված հիմնարկությունները և Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև յուրաքանչյուր պետություն, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի Կողմ, կարող են ներկայացված լինել Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցություններում որպես դիտորդներ: Ցանկացած մարմիններ կամ հիմնարկություններ, ազգային կամ միջազգային, պետական կամ ոչ պետական, որոնք իրազեկ են օգոնային շերտի պահտպանությանը վերաբերող բնագավառներին, որոնք տեղեկացրել են քարտուղարությանը՝ Կողմերի Կոնֆերանսում դիտորդի դերում ներկայացված լինելու իրենց ցանկության մասին, կարող են թույլատրվել մասնակցել նրանում, եթե դրա դեմ չի առարկում Կողմերի խորհրդակցությանը ներկաների ոչ պակաս քան մեկ երրորդը: Դիտորդների թույլատրությունը և մասնակցությունը կարգավորվում է Կողմերի Կոնֆերանսի կողմից ընդունված գործընկալի կանոններով:

## **Յոթված 7**

### **ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ**

1. Քարտուղարության վրա դրվում են հետևյալ ֆունկցիաները
  - a) խորհրդակցությունների կազմակերպումը և սպասարկումը, ինչպես այդ նախատեսված է 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներում;
  - b) զեկուցումների նախապատրաստումը և փոխանցումը, որոնք ստացվել են ըստ 4-րդ և 5-րդ հոդվածներում սահմանված տեղեկատվության, ինչպես նաև ըստ այն տեղեկատվության, որը ստացվում է 6-րդ հոդվածով սահմանված օժանդակ մարմինների խորհրդակցություններից,
  - c) ցանկացած արձանագրություններով նրա վրա դրվող ֆունկցիաների կատարումը,
  - d) իր ֆունկցիաների կատարման վերաբերյալ գործունեության մասին նրա զեկուցումների նախապատրաստումը համաձայն սույն Կոնվենցիային և նրանց ներկայացումը Կողմերի Կոնֆերանսին,
  - e) այլ համապատասխան միջազգային մարմինների հետ անհրաժեշտ գործունեության կոորդինացիայի ապահովումը և մասնավորապես, այնպիսի վարչական և պայմանագրային համաձայնությունների կնքումը, որոնք կարող են պահանջվել նրա ֆունկցիաների արդյունավետ կատարման համար;
  - f) այլ նման ֆունկցիաների կատարումը, որոնք կարող են սահմանվել Կողմերի Կոնֆերանսի կողմից:

2. Քարտուղարության ֆունկցիաները ժամանակավորապես կկատարվեն Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի կողմից ընդհուպ մինչև Կողմերի Կոնֆերանսի առաջին հերթական խորհրդակցության ավարտվելը, գումարված ի կատարում 6-րդ հոդվածի : Իր առաջին հերթական խորհրդակցությունում Կողմերի Կոնֆերանսը հիմնում է քարտուղարությունը գոյություն ունեցող այն իրազեկ միջազգային կազմակերպությունների թվից, որոնք պատրաստակամություն են հայտնել կատարելու քարտուղարության ֆունկցիաները սույն Կոնվենցիային համապատասխան:

## **Յոթված 8**

### **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

1. Կողմերի կոնֆերանսը խորհրդակցություններում կարող է ընդունել արձանագրություններ 2-րդ հոդվածին համապատասխան:

2. Ցանկացած առաջարկվող արձանագրության տեքստը փոխանցվում է Կողմերին քարտուղարության կողմից այդպիսի խորհրդակցություն անցկացնելուց ոչ պակաս քան 6 ամիս առաջ:

## **Յոդված 9**

### **ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ**

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկել ուղղումներ սույն Կոնվենցիային կամ ցանկացած արձանագրությանը: Այդպիսի ուղղումներում պատշաճ կերպով հաշվի են առնվում, մասնավորապես, համապատասխան գիտատեխնիկական նկատառումները:
2. Սույն Կոնվենցիայի ուղղումները ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի խորհրդակցությունում: Ցանկացած արձանագրության ուղղումները ընդունվում են համապատասխան արձանագրության Կողմերի խորհրդակցությունում: Սույն Կոնվենցիային կամ ցանկացած արձանագրությանը ցանկացած առաջարկված ուղղման տեքստը, եթե այդ արձանագրությունում չի նախատեսված ուրիշը, քարտուղարության կողմից հայտնվում է Կողմերին ոչ ուշ քան վեց ամիս առաջ այն խորհրդակցության անցկացումից, որտեղ առաջարկվում է այն ընդունել: Քարտուղարությունը առաջարկված ուղղումների տեքստը հայտնում է նաև Կոնվենցիան ստորագրած երկրներին, որպես ի գիտություն:
3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը՝ սույն Կոնվենցիային ցանկացած առաջարկված ուղղումների նկատմամբ կոնսենսուսի ճանապարհով համաձայնության հասնելու համար: Եթե կոնսենսուսին հասնելու համար սպառված են բոլոր միջոցները, իսկ համաձայնության դեռ չեն հասել, ապա որպես ծայրահեղ միջոց, ուղղումը ընդունվում է Կոնվենցիայի խորհրդակցությանը ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երեք քառորդով, և Դեպոզիտարիի կողմից ներկայացվում է բոլոր Կողմերին վավերացման, հաստատման կամ միանալու համար:
4. Վերը՝ 3-րդ կետում հիշատակված գործընթացը կիրառվում է ցանկացած արձանագրության ուղղումների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ընդունման համար բավական է խորհրդակցությանը ներկա և սույն արձանագրության Կողմերի քվեարկությանը մասնակցող ձայների երկու երրորդի մեծամասնությունը:
5. Դեպոզիտարիին ուղարկվում է գրավոր ծանուցում վավերացման, հավանություն տալու կամ ուղղումները ընդունելու մասին: Վերը նշված՝ 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան ընդունված ուղղումները ուժի մեջ են մտնում այն Կողմերի համար, որոնք ընդունել են այդ ուղղումները սույն Կոնվենցիայի Կողմերի ձայների ամենաքիչը երեք քառորդով կամ էլ տվյալ արձանագրության այն Կողմերի ձայների երկու երրորդով, որոնք ինսուներորդ օրը հայտնել են իրենց ծանուցումը Դեպոզիտարիին իրենց կողմից նրանց վավերացնելու, հավանություն տալու կամ ընդունելու մասին եթե միայն այդ արձանագրությունում այլ բան չի նախատեսված: Յետագայում ցանկացած այլ Կողմերի համար ուղղումները ուժի մեջ են մտնում տվյալ Կողմի ուղղումների վավերացնելու, հավանություն տալու կամ ընդունելու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո ինսուներորդ օրը:
6. Սույն հոդվածի նպատակների համար “ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերը” տերմինի տակ նկատի ունեն այն Կողմերը, որոնք ներկա են և քվեարկում են “կողմ” կամ “դեմ”:

## **Յոդված 10**

### **ՅՎՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ Ը ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

1. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածները կազմում են համապատասխանորեն սույն Կոնվենցիայի կամ այդ արձանագրության անբաժանելի մասը, և եթե ուղղակի որևէ այլ բան չի նախատեսվում, ապա սույն Կոնվենցիայի կամ նրա արձանագրությունների վկայակոչումը վերաբերում է նաև նրանց ցանկացած հավելվածներին: Այդպիսի հավելվածները սահմանափակվում են գիտատեխնիկական և վարչական հարցերով:
2. Եթե որևէ արձանագրությամբ չի նախատեսվում այլ դրույթներ նրա հավելվածների վերաբերյալ, ապա սույն Կոնվենցիայի կամ արձանագրությանը կից հավելվածներին լրացուցիչ հավելվածների մասին առաջարկության ընդունման և ուժի մեջ մտնելու համար կիրառվում է հետևյալ գործընթացը .
  - a) սույն Կոնվենցիայի հավելվածները առաջարկվում են և ընդունվում են 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում սահմանված արարողությանը համապատասխան, իսկ ցանկացած արձանագրության

հավելվածները առաջարկվում և ընդունվում են 9-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերում սահմանված գործընթացին համաձայն,

b) ցանկացած կողմը, որը հնարավոր չի համարում հավանություն տալ սույն Կոնվենցիայի լրացուցիչ հավելվածներին կամ ցանկացած արձանագրության հավելվածին, որին նա մասնակից է, ծանուցում է այդ մասին Դեպոզիտարիին գրավոր ձևով Դեպոզիտարիի կողմից ընդունման մասին հաղորդագրության ուղարկման օրվանից հաշված վեց ամսվա ընթացքում: Դեպոզիտարին անհապաղ ծանուցում է բոլոր Կողմերին իր կողմից ստացված ցանկացած այդպիսի ծանուցման մասին: Կողմը կարող է ցանկացած ժամանակ առարկության մասին ավելի վաղ ուղարկված իր հայտարարությունը փոխարինել ընդունման մասին հայտարարությամբ, որից հետո տվյալ Կողմի համար հավելվածները մտնում են ուժի մեջ:

c) Դեպոզիտարիի կողմից հաղորդման առաքման օրից վեց ամիս անց հավելվածը ուժի մեջ է մտնում սույն կոնվենցիայի կամ ցանկացած համատասխան արձանագրությունների բոլոր այն Կողմերի համար, որոնք չեն ներկայացրել ծանուցում վերը նշված (b) ենթակետի դրույթներին համապատասխան:

3. Սույն Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության հավելվածներին ուղղումների առաջարկումը, ընդունումը և ուժի մեջ մտնելը կարգավորվում է մի գործընթացով, որը նման է Կոնվենցիայի կամ արձանագրությունների հավելվածների առաջարկման, ընդունման և ուժի մեջ մտնելու համար սահմանված գործընթացին: Հավելվածներում և նրանց ուղղումներում պատշաճ կերպով հաշվի են առնվում, մասնավորապես, համապատասխան գիտատեխնիկական նկատառումները:

4. Եթե լրացուցիչ հավելվածը կամ հավելվածի ուղղումը կապված է սույն Կոնվենցիայի կամ արձանագրության մեջ ուղղում մտցնելու հետ, ապա այդ լրացուցիչ հավելվածը կամ ուղղումներով հավելվածը ուժի մեջ է մտնում միայն սույն Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության ուղղումը ուժի մեջ մտնելուց հետո:

Օգոստին շերտի պահպանության մասին կոնվենցիայի իրականացման ֆինանսական հետևանքները՝ 304 -ի կողմից ներկայացված վերանայված նախահաշիվը և մեկնաբանությունները (UNEP/WG. 94/13, UNEP/WG. 94/13Add.1 և UNEP/WG. 94/13/Add.2/Rev.1 փաստաթղթերը):

## **Հոդված 11**

### **ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Կողմերի միջև առաջացած վեճերի դեպքում շահագրգռված կողմերը ձգտում են նրա կարգավորմանը բանակցությունների ճանապարհով:

2. Եթե շահագրգռե կողմերը չեն կարող հասնել համաձայնության բանակցությունների ճանապարհով, նրանք կարող են համատեղ ապավինել երրորդ կողմի բարի ծառայություններին կամ դիմել նրան միջնորդության խնդրանքով:

3. Սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանության արժանացնելու կամ միանալու դեպքում կամ դրանից հետո ցանկացած այլ ժամանակ պետությունը կամ տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունը կարող են Դեպոզիտարիին ուղարկել գրավոր դիմում այն մասին, որ այն վեճի համար, որը չի լուծվել վերը նշված 1 և 2 կետերի դրույթներին համապատասխան, որպես կարգավորման պարտադիր միջոց նրանք ճանաչում են հետևյալ մեկը կամ երկու միջոցները միասին .

a) արբիտրաժը՝ ըստ Կողմերի Կոնֆերանսի կողմից նրա առաջին հերթական նիստով սահմանված համապատասխան գործընթացների,

b) վեճի տեղափոխումը Միջազգային Դատարան:

4. Եթե Կողմերը վերը նշված 3-րդ կետին համապատասխան, չեն ընդունել նույն գործընթացը կամ գործընթացներից ցանկացածը, ապա վեճը կարգավորվում է համաձայնեցման գործընթացի միջոցով ստորև բերվող 5-րդ կետին համապատասխան, եթե Կողմերը չեն պայմանավորվել այլ բանի մասին:

5. Վեճի կողմերից մեկի խնդրանքով ստեղծվում է համաձայնեցման հանձնաժողով: Հանձնաժողովը կազմվում է յուրաքանչյուր շահագրգիռ կողմից նշանակված հավասար թվով անդամներից և յուրաքանչյուր կողմից նշանակված անդամների կողմից համատեղ ընտրված նախագահից: Հանձնաժողովը կայացնում է վերջնական որոշում, որն ունի հանձնարարական բնույթ և որը կողմերը բարեխղճորեն հաշվի են առնում:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած արձանագրության վերաբերյալ, եթե այդ արձանագրությունում չի նախատեսված այլ բան:

## **Յոդված 12**

### **ՍՏՈՐԱԳՐՈՒՄ**

1. Պետությունների և տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունների համար սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Ավստրիայի Հանրապետության արտաքին գործերի ֆեդերալ նախարարությունում, Վիենայում 1985 թվականի մարտի 22-ից մինչև 1985 թվականի սեպտեմբերի 21-ը և Միացյալ Ազգերի Կազմակերպության Կենտրոնական հիմնարկություններում Նյու-Յորքում 1985 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 1986 թվի մարտի 21-ը:

## **Յոդված 13**

### **ՎԱՎԵՐԱԶՈՒՄԸ , ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԿԱՄ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ**

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած արձանագրություն ենթակա են վավերացման, ընդունման կամ հավանության պետությունների և տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունների կողմից: Վավերացման, ընդունման կամ հավանության վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ի պահ Դեպոզիտարիին:

2. Վերը նշված 1 կետում բերված ցանկացած կազմակերպություն, որը դառնում է Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության Կողմ, ընդ որում եթե նրա անդամ-երկրներից ոչ մեկը այդպիսի Կողմ չի համարվում, կստանձնի Կոնվենցիայից կամ համապատասխան արձանագրությունից բխող բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպության մեկ կամ ավելի անդամ-պետությունները դառնում են Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության Կողմեր, այդ կազմակերպությունը և նրա անդամ-պետությունները որոշում են ընդունում Կոնվենցիայից կամ արձանագրությունից համապատասխանաբար բխող իրենց պարտականությունների կատարման մասին: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը և անդամ-պետությունները չեն կարող զուգահեռ իրականացնել Կոնվենցիայից կամ համապատասխան արձանագրությունից բխող իրավունքները:

3. Վավերացման, ընդունման կամ հավանության մասին իրենց փաստաթղթերում վերը նշված 1 կետում բերված կազմակերպությունները, , հայտարարում են Կոնվենցիայով կամ համապատասխան արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրազեկ լինելու սահմանների մասին: Այդ կազմակերպությունները ծանուցում են Դեպոզիտարիին նաև իրենց իրազեկության սահմանների ցանկացած էական փոփոխությունների մասին:

## **Յոդված 14**

### **ՄԻԱՑՈՒՄԸ**

1. Սույն Կոնվենցիան և ցանկացած արձանագրություն բաց են պետությունների և տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունների միանալու համար Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության ստորագրումը դադարեցնելու մասին անսաթվից: Միանալու մասին փաստաթղթերը հանձնվում են ի պահ Դեպոզիտարիին:

2. Միանալու մասին իրենց փաստաթղթերում վերը նշված 1 կետում թվարկված կազմակերպությունները հայտարարում են Կոնվենցիայով կամ համապատասխան արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրազեկ լինելու սահմանների մասին: Այդ կազմակերպությունները ծանուցում են Դեպոզիտարիին նաև իրենց իրազեկ լինելու սահմանների ցանկացած էական փոփոխությունների մասին:

3. 13-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները կիրառվում են տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունների նկատմամբ, որոնք միանում են սույն Կոնվենցիային կամ ցանկացած արձանագրությանը:

### **Յոթված 15**

#### **ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՄՔԸ**

1. Կոնվենցիայի կամ ցանկացած արձանագրության յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:
2. Բացառությամբ վերը նշված 1 կետում նախատեսված դրույթի, , տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպություններն իրենց իրավասության սահմաններում գտնվող հարցերում իրականացնում են իրենց ձայնի իրավունքը, տնօրինելով ձայների այնքան թիվ, որը հավասար է Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության Կողմեր հանդիսացող նրանց անդամ-պետությունների թվին: Նշված կազմակերպությունները կորցնում են իրենց ձայնի իրավունքը, եթե նրանց անդամ-պետությունները իրականացնում են այդ ձայնի իրավունքը և հակառակը:

### **Յոթված 16**

#### **ԿԱՊԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

1. Պետությունը կամ տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունը կարող է դառնալ որևէ արձանագրության Կողմ միայն այն դեպքում, եթե նա հանդիսանում կամ դառնում է միաժամանակ նաև Կոնվենցիայի Կողմ:
2. Ցանկացած արձանագրությանը վերաբերող բանաձևերը ընդունվում են միայն համապատասխան արձանագրության կողմերով:

### **Յոթված 17**

#### **ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հավանության արժանանանլու կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու իննսուներորդ օրը:
2. Ցանկացած արձանագրություն, եթե նրանում այլ բան չի նախատեսված, ուժի մեջ է մտնում տվյալ արձանագրության վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին տասնմեկերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու իննսուներորդ օրը:
3. Յուրաքանչյուր Կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս սույն Կոնվենցիային կամ միանում է նրան վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրա կողմից Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնելուց հետո իննսուներորդ օրը :
4. Ցանկացած արձանագրություն, եթե այդ արձանագրության մեջ չի նախատեսված այլ բան, ուժի մեջ է մտնում այն կողմի համար, որը վավերացնում, ընդունում կամ հավանություն է տալիս այդ փաստաթղթին կամ միանում է նրան համաձայն վերը նշված 2 կետին՝ նրա կողմից Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանություն տալու կամ միանալու մասին իր փաստաթուղթը ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ, օրը կամ այն օրը, երբ Կոնվենցիան այդ Կողմի համար ուժի մեջ է մտնում, կախված նրանից, թե այդ օրերից որն ավելի ուշ կգա:
5. Վերը հիշված 1 և 2 կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությանը ի պահ հանձնված ցանկացած փաստաթուղթ չի դիտվում որպես լրացում այդ կազմակերպությունների անդամ-պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերին:

## Յոդված 18

### **ՎԵՐԱՊԱՐՈՒՄՆԵՐԸ**

Սույն Կոնվենցիայի նկատմամբ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

## Յոդված 19

### **ԵԼՔԸ**

1. Ցանկացած ժամանակ սույն Կոնվենցիան տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի հետո, Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից՝ ուղղելով Դեպոզիտարիին գրավոր ծանուցում:
2. Բացառությամբ որևէ արձանագրության մեջ ուստի նախատեսված դեպքերի, ցանկացած ժամանակ տվյալ Կողմի համար այդ արձանագրությունը ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի անց այդ կողմը կարող է դուրս գալ արձանագրությունից, ուղղելով Դեպոզիտարիին գրավոր ծանուցում:
3. Ցանկացած այդպիսի ելք ուժի մեջ է մտնում դեպոզիտարիի կողմից ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարի անց կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշված լինել ելքի ծանուցման մեջ:
4. Սույն Կոնվենցիայից դուրս եկած ցանկացած Կողմ համարվում է նաև դուրս եկած ցանկացած արձանագրությունից, որի կողմ նա հանդիսանում է:

## Յոդված 20

### **ԴԵՊՈԶԻՏԱՐԻՆ**

1. Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարը կատարում է սույն Կոնվենցիայի և ցանկացած արձանագրությունների Դեպոզիտարիի ֆունկցիան:
2. Դեպոզիտարին տեղեկացնում է Կողմերին, մասնավորապես, հետևյալի մասին՝
  - a) սույն Կոնվենցիայի և ցանկացած արձանագրության ստորագրման մասին և հանձնման, վավերացման, ընդունման կամ հավանություն տալու, կամ միանալու մասին փաստաթղթերը՝ ի պահ հանձնելու մասին, համաձայն 13 և 14 հոդվածների,
  - b) Կոնվենցիայի և ցանկացած արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին, համաձայն 17-րդ հոդվածի,
  - c) 19-րդ հոդվածի համաձայն արված ելքի ծանուցումների մասին ,
  - d) Կոնվենցիային և ցանկացած արձանագրության ընդունված ուղղումների, Կողմերի կողմից նրանց ընդունելու և ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին 9-րդ հոդվածին համաձայն,
  - e) հավելվածների և նրանց ուղղումների ընդունման և հավանություն տալու մասին բոլոր հաղորդագրությունների մասին 10-րդ հոդվածին համապատասխան;
  - f) տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունների ծանուցումները սույն կոնվենցիայով և ցանկացած արձանագրություններով ու նրանց ուղղումներով կարգավորվող հարցերի մասին նրանց իրազեկ լինելու սահմանների մասին,
  - g) 11 հոդվածի 3 կետի համաձայն արված հայտարարությունների մասին:

## Յոդված 21



## ՎԱՎԵՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Կոնվենցիայի բնագիր տեքստը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տարբերակները հավասար վավերական են, հանձնվում է ի պահ Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ համապատասխան ձևով, դրա համար լիազորված ստորև ստորագրողները, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Իրագործվել է Վիենայում 1985 թվականի մարտի 22-րդ օրը

-

## Հավելված I

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. Կոնվենցիայի Կողմերը ընդունում են, որ գլխավոր գիտական հիմնահարցերն են՝

a) Օզոնային շերտի փոփոխությունը, որն արդյունքում կարող է առաջ բերել արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության փոփոխություն, որն ազդում է կենդանի օրգանիզմների վրա (ՈՒՄ-Կ) և հասնում է երկրի մակերեսին և մարդու առողջության, օրգանիզմների, էկոհամակարգերի և մարդու կողմից օգտագործվող նյութերի վրա հնարավոր հետևանքները,

b) օզոնի ուղղաձիգ պրոֆիլի փոփոխումը, որը կարող է խախտել մթնոլորտի ջերմաստիճանային կառուցվածքը, և եղանակի և կլիմայի համար հնարավոր հետևանքները:

2. Կոնվենցիայի Կողմերը 3-րդ հոդվածին համապատասխան համագործակցում են հետազոտությունների և սիստեմատիկ դիտարկումների անցկացման բնագավառում և ձևակերպում հետազոտությունների և դիտարկումների մասին հանձնարարականներ այնպիսի բնագավառներում, ինչպիսին են՝

a) Մթնոլորտի ֆիզիկայի և քիմիայի հետազոտությունները

i) կոնպլեքսային տեսական մոդելավորում. ճառագայթող, դինամիկ և քիմիական պրոցեսների փոխազդեցությունը քննարկող մոդելների հետազոտ մշակում, մարդու կողմից ստեղծված և բնական զանազան նյութերի մթնոլորտային օզոնի վրա միաժամանակ գործած ազդեցության ուսումնասիրությունը, արբանյակներից և վերերկրյա սարքերից ստացված հեռաչափական չափումների տվյալների մեկնաբանությունը, մթնոլորտային և գեոֆիզիկական պարամետրերի գնահատումը և այդ պարամետրերի փոփոխությունների պատճառների որոշման մեթոդների մշակումը,

ii) տրոպոսֆերային և ստրատոսֆերային քիմիական և ֆիզիկական պրոցեսների փոխազդեցության մեխանիզմների և կլաման հատումների, փոփոխությունների գործակիցների լաբորատոր չափումները, սպեկտրոսկոպիայի տվյալները լուսապատկերի բոլոր համապատասխան հատվածներում դաշտային չափումների ուժեղացման համար,

iii) դաշտային չափումներ. ինչպես բնական, այնպես էլ մարդածին ծագում ունեցող հիմնական ելակետային գազերի կոնցենտրացիայի և հոսքերի ուսումնասիրությունը, մթնոլորտային դինամիկայի հետազոտությունները, երկրի մթնոլորտի սահմանից վերև լուսաքիմիական տեսակետից ազգակից հետազոտման օբյեկտների միաժամանակ չափումները, in situ տվիչների և հեռացույց տվիչների

օգտագործմամբ, տարբեր կետերում և տարբեր գործիքներով ստացված տվյալների համեմատությունը, ներառելով արբանյակային ապարատուրայի համար չափումների անվանացուցակների կոորդինացիան և միասնացումը, հիմնական հետքային մթնոլորտային խառնուրդների, արեգակնային ճառագայթման սպեկտրալ հոսքի և օդերևութաբանական պարամետրերի եռաչափ պատկերների ստացումը,

iv) գործիքների մշակում, ներառելով նաև հետքային մթնոլորտային խառնուրդների, արեգակնային ճառագայթման հոսքի և օդերևութաբանական պարամետրերի չափման համար արբանյակային և ոչ արբանյակային տվիչները,

b) Օզոնային շերտի փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությունը մարդու առողջության, կենսոլորտի և լուսաքայքայման պրոցեսների վրա

i) մարդու մոտ տեսանելի և ուլտրամանուշակագույն արեգակնային ճառագայթահարման կապը a) մաշկի ինչպես ոչ մեկանոմային, այնպես էլ մեկանոմային քաղցկեղի զարգացմամբ և b) իմունային համակարգի վրա գործած ազդեցությամբ.

ii) ՈՒՄ-4-ի ճառագայթման ներգործությունը ըստ ալիքների երկարության a) գյուղատնտեսական կուլտուրաների, անտառի և ցամաքի այլ էկոհամակարգերի վրա և b) ջրային էկոհամակարգերի սննդային շղթայի և ձկնորսության վրա և նաև ծովային ֆիտոպլանկտոնի կողմից թթվածնի անջատման հնարավոր արգելակումը,

iii) ՈՒՄ-4 ճառագայթման ներգործման մեխանիզմները կենսաբանական նյութերի, տեսակների և էկոհամակարգերի վրա, ներառյալ դոզայի, դոզայի հզորության և ռեակցիայի միջև եղած կապը, ֆոտոռեպարացիա, ադապտացիա և պաշտպանություն,

iv) տարբեր ալիքի երկարություն ունեցող զոնաների հնարավոր փոխազդեցության ի հայտ բերելը ազդեցության կենսաբանական սպեկտրների և պոլիքրոմատիկ ճառագայթահարման սպեկտրալ ռեակցիայի ուսումնասիրման ճանապարհով,

v) ՈՒՖ-4 ճառագայթման ներգործությունը կենսոլորտի բալանսում կարևոր դեր խաղացող, կենսաբանական տեսակների զգայունակության և ակտիվության և այնպիսի առաջնային բնական պրոցեսների վրա, ինչպիսին են ֆոտոսինթեզը և կենսասինթեզը,

vi) ՈՒՄ-4 ճառագայթման ներգործումը աղտոտող նյութերի, գյուղատնտեսական քիմիկատների և այլ նյութերի ֆոտոքայքայման վրա,

c) Կլիմայի վրա ներգործման ուսումնասիրությունը

i) օզոնի և այլ միկրոէլեմենտների ռադիացիոն էֆեկտի և կլիմայական պարամետրերի վրա ազդեցության տեսական ուսումնասիրությունը և դիտարկումները, ինչպիսին են ցամաքի մակերևույթի և օվկիանոսի ջերմաստիճանը, տեղումների բնույթը, փոխանակությունը տրոպոսֆերայի և ստրատոսֆերայի միջև

ii) մարդկային գործունեության տարբեր ձևերի վրա կլիմայի այդպիսի փոփոխության ազդեցության ուսումնասիրությունը:

d) Սիստեմատիկ դիտարկումներ`

i) օզոնային շերտի վիճակի դիտարկումներ (օզոնի ընդհանուր բաղադրության և ուղղաձիգ պրոֆիլի տարածքային և ժամանակային փոփոխականությունը) վերջնական շարք մտցնել օզոնային շերտի դիտարկումների գլոբալ համակարգը, որը հիմնվում է դիտարկումների վերերկրյա և արբանյակային համակարգերի ինտեգրացիայի վրա,

ii) տրոպոսֆերայի և ստրատոսֆերայի, ելակետային գազերի կոնցենտրացիայի, նրանց մեջ HOx, NOx և CLOx, ինչպես նաև ածխածնային միացությունների պարունակության դիտարկումներ,

iii) ջերմաստիճանի դիտարկումներ երկրի մակերևույթից մինչև մեզոսֆերա, օգտագործելով ինչպես վերերկրյա, այնպես էլ արբանյակային համակարգերը;

iv) արեգակնային ճառագայթման երկրի մթնոլորտին հասած հոսքի ալիքային կազմի, և նրանից հեռացող ջերմային ճառագայթման դիտարկումները, օգտագործելով արբանյակներից ստացած տվյալները,

v) երկրի մակերևույթին հասնող և կենդանի օրգանիզմների վրա ազդող արեգակնային ճառագայթման ալիքային հոսքի կազմի դիտարկումներ սպեկտրի ուլտրամանուշակագույն հատվածում (ՌՄՄ-4);

vi) աերոզոլների հատկությունների և բաշխման դիտարկումներ երկրի մակերևույթից մինչև մեզոսֆերա ընկած շերտում, օգտագործելով դիտումների վերերկրյա, ինքնաթիռային և արբանյակային համակարգերը,

vii) կլիմայագիտության համար մեծ նշանակություն ունեցող փոփոխականների դիտարկումներ ցամաքի մակերևույթի բարձրորակ օդերևութաբանական չափումների իրականացման ծրագրերի հիման վրա,

viii) միկրոէլեմենտների, ջերմաստիճանի, արեգակնային ռադիացիայի հոսքի և աերոզոլների դիտարկումներ, օգտագործելով գլոբալ տվյալների անալիզի ավելի կատարելագործված մեթոդներ:

3. Կոնվենցիայի Կողմերը համագործակցում են խրախուսելով պատշաճ գիտա-տեխնիկական նախապատրաստումը, որը անհրաժեշտ է սույն հավելվածում նշված հետազոտություններում և սխտեմատիկ դիտարկումներում մասնակցելու համար, հաշվի առնելով զարգացող երկրների հատուկ պահանջները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սարքավորումների խաչաձև աստիճանաշմանը և դիտարկումների մեթոդների համաձայնեցմանը գիտական տվյալների սխտեմատացված կամ համադրված շարքեր կազմելու համար:

4. Ընդունված է, որ կամայական կարգով թվարկված հետևյալ բնական կամ մարդածին ծագում ունեցող քիմիական նյութերը կարող են փոփոխել օզոնային շերտի քիմիական և ֆիզիկական հատկությունները:

a) Ածխածնային նյութերը

i) Ածխածնի օքսիդը (CO)

Ածխածնի օքսիդն ունի կարևոր բնական և մարդածին աղբյուրներ և, ինչպես ենթադրում են, խաղում է նշանակալից ուղիղ դեր տրոպոսֆերայի լուսաքիմիական պրոցեսներում և կողմնակի դեր՝ ստատոսֆերայի լուսաքիմիական պրոցեսներում:

ii) Ածխածնի դիօքսիդը (CO2)

Ածխածնի դիօքսիդն ունի կարևոր բնական և մարդածին աղբյուրներ և ազդում է ստրատոսֆերայի օզոնի վրա մթնոլորտի ջերմային ստրուկտուրայի վրա գործած ազդեցության միջոցով:

iii) Մեթան (CH4)

Մեթանն ունի ինչպես բնական, այնպես էլ մարդածին աղբյուրներ և ազդում է ինչպես տրոպոսֆերային, այնպես էլ ստրատոսֆերային օզոնի վրա:

iv) Ածխաջրածինների ոչ մեթանային տեսակներ

Ածխաջրածինների ոչ մեթանային տեսակները կազմված են մեծ թվով քիմիական նյութերից, ունեն ինչպես բնական, այնպես էլ մարդածին աղբյուրներ և խաղում են ուղիղ դեր՝

տրոպոսֆերայի լուսաքիմիական պրոցեսներում և կողմնակի դեր՝ ստրատոսֆերայի լուսաքիմիական պրոցեսներում:

b) Ազոտ պարունակող նյութեր

i) Ազոտի ենթօքսիդը (N<sub>2</sub>O)

N<sub>2</sub>O-ի աղբյուրների գերակշռող մասը իրենց բնույթով բնական են, սակայն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում նրանց մարդածին ազդեցությունը: Ազոտի ենթօքսիդը - ստրատոսֆերային NOX-ի հիմնական աղբյուրն է, որոնք վճռական դեր են խաղում ստրատոսֆերային օզոնի քանակության կարգավորման մեջ,

ii) Ազոտի օքսիդները (NOX)

NOX-ի վերերկրյա աղբյուրները կարևոր ուղիղ դեր են խաղում միայն տրոպոսֆերայի լուսաքիմիական պրոցեսներում, իսկ կողմնակի դեր՝ ստրատոսֆերայի լուսաքիմիայում, ընդ որում NOX-ի ներանցումը տրոպոպաուզայի մոտակայքում կարող է անմիջականորեն առաջ բերել օզոնի փոփոխություն տրոպոսֆերայի վերին շերտերում և ստրատոսֆերայում:

c) Քլոր պարունակող նյութեր

i) Ամբողջությամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ CCL<sub>4</sub>, CFCL<sub>3</sub>, (CFC-11), CF<sub>2</sub>CL<sub>2</sub>, (CFC-12), C<sub>2</sub>F<sub>3</sub>CL<sub>3</sub> (CFC-113), C<sub>2</sub>F<sub>4</sub>CL (CFC-114)

Ամբողջությամբ հալոհիդացված ալկանները մարդածին են և գործում են որպես CLOx-ի աղբյուր, որը վճռական դեր է խաղում օզոնի լուսաքիմիայում, հիմնականում 30-50 կմ բարձրության վրա:

ii) Մասամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ CH<sub>3</sub>CL, CHF<sub>2</sub>CL (CFC-22), CH<sub>3</sub>CCl<sub>3</sub>, CHFCL<sub>2</sub> (CFC-21)

CH<sub>3</sub>CL-ի աղբյուրները բնական են, այն դեպքում, երբ մնացած վերը նշված մասամբ հալոհիդացված ալկաններն ունեն մարդածին ծագում: Այդ գազերը ևս հանդես են գալիս որպես ստրատոսֆերային CLOx-ի աղբյուր:

d) Բրոմ պարունակող նյութեր

Ամբողջությամբ հալոհիդացված ալկաններ, օրինակ CF<sub>3</sub>Br

Այդ գազերը մարդածին են և գործում են որպես BrOx-ի աղբյուր, որոնց ազդեցությունը նման է CLOx-ի ազդեցությանը:

c) Ջրածին պարունակող նյութեր

i) Ջրածին (H<sub>2</sub>)

Ջրածինը, որի աղբյուրը բնական է և մարդածին, աննշան դեր է խաղում ստրատոսֆերայի լուսաքիմիայում:

ii) Ջուր (H<sub>2</sub>O)

Ջուրը, որի աղբյուրը բնական է, շատ կարևոր դեր է խաղում ինչպես տրոպիկական, այնպես էլ ստրատոսֆերային լուսաքիմիայում: Ստրատոսֆերայում ջրային գոլորշիների լուրջ աղբյուր են մեթանի և , ավելի քիչ , ջրածնի օքսիդացումը :

## **Չավելված II**

### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ**

1. Կոնվենցիայի Կողմերը ճանաչում են, որ տեղեկատվության հավաքումը և նրա փոխանակումը սույն Կոնվենցիայի նպատակների իրականացման կարևոր միջոցն է և այն բանի երաշխիքը, որ ցանկացած ձեռնարկված միջոցառումներ, կլինեն տեղին և արդարացի: Դրա համար Կողմերը կփոխանակեն գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, գործնական, կոմերցիոն և իրավական տեղեկատվություն:

2. Կոնվենցիայի Կողմերը, այն հարցի լուծման ժամանակ, թե ինչ տեղեկատվություն է ենթակա հավաքման և փոխանակման, պարտավոր են ուշադրություն դարձնել տեղեկատվության օգտավետության և նրա ստացման արժեքի վրա: Կողմերն այնուհետև ճանաչում են , որ համագործակցությունը, որի մասին խոսվում է սույն հավելվածում, պետք է համատեղելի լինի ազգային օրենքների, որոշումների և արտոնագրերի նկատմամբ կիրառվող պրակտիկայի հետ, առևտրական գաղտնիքների և գաղտնագրված և արտոնագրված տեղեկատվության հետ:

### **3. Գիտական տեղեկատվություն**

Նրան է վերաբերում հետևյալ տեղեկատվությունը՝

a) տեղեկատվությունը գիտական հետազոտությունների մասին, որոնք կատարվում են գիտատեխնիկական ծրագրերի կոորդինացիայի հեշտացման նպատակով պլանավորված և պետական կամ մասնավոր հիմունքներով, և այդպիսով ավելի արդյունավետ օգտագործելով առկա ազգային և միջազգային ռեսուրսները,

b) արտանետումների մասին տվյալները, որոնք անհրաժեշտ են հետազոտման համար;

c) հատուկ գիտական գրականության մեջ հրապարակված գիտական արդյունքների մասին տեղեկատվությունը երկրի մթնոլորտի ֆիզիկայի և քիմիայի, փոփոխությունների նկատմամբ նրա զգայունության մասին և հատկապես, օզոնային շերտի վիճակի և մարդու առողջության, շրջակա միջավայրի և կլիմայի վրա թողած հետևանքների մասին, ժամանակի ցանկացած սանդղակում օզոնի ընդհանուր բաղադրության կամ ուղղաձիգ պրոֆիլի փոփոխության մասին,

d) գիտական հետազոտությունների արդյունքների գնահատման և ապագա ուսումնասիրությունների հանձնարարականների մասին:

### **4. Տեխնիկական տեղեկատվություն**

Նրան է վերաբերում հետևյալ տեղեկատվությունը

a) օզոնային շերտը փոփոխող նյութերի արտանետումները կրճատող քիմիական փոխարինողների և այլընտրանքային տեխնոլոգիաների առկայության և արժեքի մասին, ինչպես նաև դրա հետ կապված պլանավորվող կամ իրականացվող հետազոտությունների մասին,

b) քիմիական և այլ փոխարինողների և այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառման հետ կապված սահմանափակումների և հնարավոր ռիսկի մասին:

5. Սոցիալ-տնտեսական և առևտրական տեղեկատվության  
I հավելվածում հիշատակված նյութերի վերաբերյալ

Նրան է վերաբերում հետևյալ տեղեկատվությունը

- a) արտադրության և արտադրական հզորության մասին,
- b) արտադրանքի օգտագործման և օգտագործման տեղեկանքների մասին,
- c) ներմուծման/արտահանման մասին,
- d) անուղղակիորեն օգոնային շերտի փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեության տեսակների ծախսերի, ռիսկի և օգուտների մասին և այդ գործունեությունը կարգավորող ընդունված կամ պլանավորվող միջոցառումների ազդեցության մասին:

-

6. Իրավական տեղեկատվություն

Նրան է վերաբերվում հետևյալ տեղեկատվությունը`

- a) օգոնային շերտի պահպանության վերաբերյալ ազգային օրենքների, վարչական միջոցառումների և իրավական ուսումնասիրությունների մասին,
- b) օգոնային շերտի պահպանության վերաբերյալ միջազգային, այդ թվում նաև երկկողմանի համաձայնագրերի մասին,
- c) օգոնային շերտի պահպանության հետ կապված լիցենզավորման մեթոդների և պայմանների , արտոնագրերի առկայության մասին:

Օգոնային շերտի պահպանության մասին  
լիազոր ներկայացուցիչների կոնֆերանս  
Վիեննա, 1985թ մարտի 18-22

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

արված օգոնային շերտի պահպանության մասին լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսի եզրափակիչ  
վավերագրի ընդունման պահին

-

1. Ավստրալիայի, Ավստրիայի, Բելգիայի, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության, Դանիայի, Իտալիայի, Կանադայի, Նիդերլանդների, Նոր Զելանդիայի, Նորվեգիայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Չիլիի, Շվեյցարիայի և Շվեդիայի պատվիրակությունները արտահայտում են իրենց ափսոսանքը, որ օգոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիայում բացակայում է այն դրույթը, որ վեճերը կողմերից մեկի խնդրանքով պարտադիր կերպով կարող են կարգավորվել երրորդ կողմի օգնությամբ: Ավանդապահորեն պաշտպանելով այդ գործընթացը նշված պատվիրակությունները կոչ են անում Կոնվենցիայի բոլոր Կողմերին օգտվել հնարավորությունից և հայտարարություն հղել համաձայն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ կետի:

2. Եգիպտոսի պատվիրակությունը կրկին հայտարարում է այն մասին, որ իր կառավարությունը կարևորում է շրջակա միջավայրին , ներառյալ նաև օգոնային շերտի պահպանությանը ուղղված միջազգային և ազգային ջանքերը: Այդ պատճառով հենց սկզբից նա մասնակցել է օգոնային շերտի պահպանության մասին լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներին և Կոնվենցիայի ու բանաձևերի հաստատմանը: Միանալով Կոնվենցիայի 1 հոդվածով սահմանված կոնսենսուսին` Եգիպտոսի պատվիրակությունը համարում է ,որ տվյալ հոդվածի 6-րդ կետը կիրառելի է բոլոր ռեգիոնալ կազմակերպությունների նկատմամբ, ներառյալ նաև Աֆրիկայի

միասնության կազմակերպությունը և Արաբական պետությունների լիգան, եթե նրանք բավարարում են տվյալ հոդվածում շարադրված պայմաններին, այսինքն. նրանք իրազեկ են Կոնվենցիայով կարգավորվող հարցերին և իրենց ներքին գործընթացի կանոններին համապատասխան, պատշաճ կերպով լիազորված են իրենց անդամ-պետությունների կողմից: Միանալով կոնսենսուսին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, Եգիպտոսի պատվիրակությունը հայտարարում է, որ տվյալ հոդվածի 2-րդ կետի առաջին առաջարկությունը հարկավոր է հասկանալ ներածականի երրորդ կետի լույսի ներքո: Միանալով N1 բանաձևով կազմակերպչական և ֆինանսական միջոցառումների վերաբերյալ կոնսենսուսին, Եգիպտոսի պատվիրակությունը հայտարարում է, որ իր կողմից տվյալ բանաձևի ներածականի երրորդ կետին հավանություն տալը չի հակասում անդամ-պետությունների միջև անդամավճարների բաշխման մեթոդի վերաբերյալ նրա դիրքին, ընդ որում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել 2-րդ տարբերակին, որը պաշտպանվել է նրա կողմից UNEP/WC.94/13 նախապատրաստական փաստաթղթի քննարկման ընթացքում, որի համաձայն ծախսերի 80 տոկոսը վճարում են արդյունաբերական զարգացած երկրները, իսկ մնացած 20 տոկոսը բաշխվում են անդամ-պետությունների միջև Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամավճարների սանդղակի հիման վրա:

3. N2 բանաձևը, որը վերաբերում է քլորֆտորածխաջրածինների մասին Արձանագրությանը, ճապոնիայի պատվիրակությունը համարում է, որ Արձանագրության վրա աշխատանքի շարունակման նպատակահարմարության մասին որոշման ընդունումը հարկավոր է հետաձգել մինչև Օզոնային շերտի պահպանության մասին կորդիինացիոն կոմիտեի աշխատանքի արդյունքների ստացումը: Երկրորդը՝ ինչ վերաբերում է վերոհիշյալ բանաձևի 6-րդ կետին, ապա ճապոնիայի պատվիրակության կարծիքով, յուրաքանչյուր երկիր ինքը պարտավոր է որոշում ընդունել քլորֆտորածխաջրածինների արտանետումների հսկողության կարգի մասին:

4. Իսպանիայի պատվիրակությունը նշում է, որ 1985 թվականի մարտի 21-ին Կոնֆերանսի նախագահի կատարած հայտարարության համապատասխան իր կառավարությունը հաշվում է, որ քլորֆտորածխաջրածինների մասին Արձանագրության բանաձևի 6-րդ կետը բացառապես վերաբերում է միայն առանձին երկրներին, որոնց առաջարկվում է հսկել արտադրության և օգտագործման իրենց սահմանափակումները, այլ ոչ թե երրորդ երկրներին կամ այդպիսի երկրների ռեգիոնալ կազմակերպություններին:

5. Ամերիկայի Միացյալ Նահանգների պատվիրակությունը հայտարարում է, որ, իր կարծիքով, Կոնվենցիայի 15-րդ հոդվածը նշանակում է, որ տնտեսական ինտեգրացիայի յուրաքանչյուր ռեգիոնալ կազմակերպություն, որի անդամ-պետություններից ոչ մեկը չի հանդիսանում Կոնվենցիայի կամ համապատասխան արձանագրության մասնակից, տնօրինում է մեկ ձայն: Նա նմանապես հաշվում է, որ 15-րդ հոդվածը տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպություններին և իր անդամ-պետություններին չի թույլատրում կրկնակի քվեարկություն, այլ խոսքով, տնտեսական ինտեգրացիայի ռեգիոնալ կազմակերպությունները երբեք իրավունք չունեն քվեարկելու ի լրացում իրենց անդամ-պետությունների, որոնք